

ՄՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ



Դատարկության հետ հույս կա խառնված, երբ նայում ենք մենք իրար աչքերի, Մեր մտքերի մեջ լուսաբաց սպասված, Որ հայրենիքը նոր վերելք կապրի:

Հպարտ լեռների այն ճերմակ ծյուներ, Դաշտերը ծլած, նորից կանաչող... Սա՛ է երկիրս, սա՛ է մեր տունը, Սա՛ է գալիքի նոր օրը բացվող:

Ու որովհետև աշխարհում ոչ մի քամի այդպես չէր շրջել ինձ, Ու ոչ մի քամուց այդպես չէի դողացել, անգամ փակ սենյակում... այսուհետ քամուն քո անունն եմ տալիս...

Ու ոչ մի օր արևն այդպես պայծառ չէր լուսավորել դեմքս, չէր ջերմացրել հայացքս, ժպիտ չէր բերել... այսուհետ արևին քո անունն եմ տալիս՝ ապացույց ունենալով աչքերդ...

Ու ոչ մի կտոր հող այդպես չբռնեց ինձ ընկնելիս, ոչ մի պատառ երկինք չխաղաղեց ու նպատակ չդարձավ բարձրանալու... այլևս քո անունն ունեն տարերքները այդ...

Ու ոչ մի գիշեր չբերեց իր հետ այդչափ հանգստություն, չբերեց այդքան երազանք... արի չերկարացնեմ. այսուհետ գիշերն էլ, ցերեկն էլ՝ դու ես...

Ու ոչ մի ուսուցիչ չօգնեց այդքան սովորել, ու ոչ մի փրկարար չփրկեց ինձ սեփական կրակներից, ու ոչ մեկը չեղավ դու ... այսուհետ մարդ ասվածին քո անունն եմ տալիս:

Ու քո անունն եմ տալիս փողոցներին, քաղաքներին, հայրենիքին... քո գալու փաստով՝ Աստծուն առավել հավատ եմ տալիս...

Ու թե քամի ու արև ես, թե երկինք ես ու հող, գիշեր ես, ցերեկ... կյանք ես մի ամբողջ, իսկ ես սիրում եմ կյանքն ու սիրուն քո անունն եմ տալիս... ու տալիս եմ քեզ :

Լենա ԱՄԻՐԽԱՆՅԱՆ, ԻԿՄ, 2-րդ կուրս

Հայրենիքն ուսումնասիրեցինք, Բայց հաստատ այնքան չսիրեցինք Որ պինդ պահենք զրկում մեր , Կորցնելուց միայն ասացինք.«Հայր, մեր» Զավակներ տվեցինք հայրենիքին ու տվեցինք հայրենիքը...

Մի հայրենիք ու հազար կյանք Մի հայրենիք ու ձեզ խնդրանք, Որ պինդ պահենք, որ էլ չտանք, Իմ հայրենիք, իմ երազանք ...

Մի սրտի չափ, մի ափի մեջ, Ու վիրավոր, բայց և անշեջ Մի հայրենիք ու հազար կյանք... Ու մի բուռ հող՝ որտեղ դեռ կանք Որտեղ դեռ կանք ու կմանք...

Զարկված լեռների այն ճերմակ ծյուներ, Դաշտերը հոգնած, ցավից սևացող... Սա՛ է երկիրս, սա՛ է իմ տունը, Սա՛ է իմ վանքի զանգը դողանջող:



ՔՈ ՃԱՄԱՆԱԿԸ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ԲՆԱՊԱՇՏԱԿԱՆ ՊՈՒՋԻԱՆ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱՌՋԵՎ ԾԱՌԱՅԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔ



Ուսումնասիրելով Համո Սահյանի բնապաշտական պոեզիան՝ որպես հայրենիքի առջև ծառայած խնդիրների արձագանք, կարելի է առանձնացնել մի շարք կարևոր խնդիրներ.



- Ազգային ինքնության պահպանման խնդիր
- Արտագաղթի խնդիր
- Մայրենի պահպանման խնդիր
- Արժեհամակարգի պահպանման խնդիր
- Սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլ խնդիրներ:

Բազում չարչարանքների, օտարի բռնակալության, կյանքի հոգսերի թոհուրթոհով անցած հայ ժողովրդի առջև մշտապես ծառայած խնդիր է եղել պահպանել ազգային ինքնությունը, առավել ևս՝ հայրենիքից հեռու՝ պանդխտության պայմաններում: Պանդխտությունը աղետ է. մարդը չի կարող ապրել առանց ինքն իրեն, իսկ պանդխտությունը դա է քարոզում: Եվ բանաստեղծը հռետորական հարց է հնչեցնում.

Ա՛խր ես ինչպե՞ս ապրեմ առանց ինձ... Ուր էլ որ լինենք հայրենիքը մոր նման կանչում է մեզ. Կանչում ես ինձ հեռվից հեռու Ծաղիկներիդ անուշ հոտով Եվ կարոտով, քո կարոտով Տանջում ես ինձ հեռվից հեռու: Բանաստեղծը ծանր է տանում արտագաղթի փաստը: Երկիրը լքվում է, դատարկվում: Ուրիշ երկրներում, անծանոթ դաշտավայրերում, օտար աշխարհի լեռնալանջերում ևս գարուններ են բացվում, սակայն Պայծառ է գարունն այստեղ այս տարի

Բայց կրակվում է իմ հոգին դարձյալ Գարնան կարոտով իմ Հայաստանի: Ազգային ինքնության պահպանման կարևորագույն նախապայման է մայրենի լեզվի պահպանումը: Մայրենիով են խոսել մեր պապերը, արքաներն ու սեպուհները, շինական է խոսել՝ հոգնած ու հեգ: Եվ ուստի՝ անհրաժեշտ է, որ հինավուրց ու նորագ հայ լեզուն ավելի փարթամ ծաղկի:

Ոչ մի մորիկ ու հողմ մեզմիջ քեզ չի պոկի, Եվ քեզ չի խափանի ոչ մի աղետ, Մեր գոյության արև, մեր ինքնության ոգի, Հավիտենից ի վեր և առհավետ: Տան մեծի հարգանքը, գերդաստանի անդամների հանդեպ սերն ու մեծարանքը հայ ժողովրդի դարավոր ավանդույթներից և, չնայած որոշ վերապահումներով, այսօր էլ շարունակվում է այդ ավանդույթը: Բանաստեղծի ընտանիքում սովորություն կար. նախքան ճաշելը. Նստում էին և սպասում Մինչև պապը գար, Մինչև բակում Ծաղիկ եզան Ձանգը ծլնգար: Միայն պապի գալուց և ողջ գերդաստանի հավաքվելուց հետո իրավունք կար գոյալ վերցնել և ճաշել: Վայելում էր տաք թանապուր, Լավաշ ու սամիթ Աշխատավոր մի գերդաստան Պարզ ու միամիտ: **Գայանե ՄԻՋՈՅԱՆ, Հայ գրակ. պատմ., մագիստրատուրա 1-ին կուրս**

«Քո Ճամանակը»

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Սպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5: Հեռ.՝ (047) 94 04 91

Խմբագիր՝ Զ.ՍԱՌԱՋՅԱՆ
Համարի պատասխանատու՝ Համեստ Մկրտչյան, լրագրություն՝ 3-րդ կուրս

Կ Գ Տ Ն Ի . . .

Նրա հասարակ պերճախոսությունը, բարի վարվեցողությունը և առաքինության բոլոր տարրերը փոքր-ինչ տարրալուծվել էին: Տխուր էր... 2-րդ տեղի եղանակն է պատճառը, թե հոգին անվերջ խարխուղ «ընկերական» տհաճությունը: Օրերը հաջորդում էին միմյանց, փոխվում էր աշխարհը, փոխվում՝ ամեն ինչ. միայն ինքն էր մնում նույնը՝ նման իր տան պատից կախված ժամացույցին, որը միշտ նույնն է և սպասում է «նույնին»: Ամեն երեկո նայում էր պատշգամբից՝ տեսնելով խաչի մեծ պատկերը, քրքրում էր վաղուց տանջված գրքի էջերը: Սակայն չէր գտնում ցանկացածը: Նրա բոլոր երեկոները նման էին իրար՝ միապաղաղ, պարզ, անիմաստ, ոչինչ չնշանակող: Սակայն նա չէր կորցնում ապրելու մեծ հույսը... Թեկուզ կորցրել էր ամենազխավորը և չէր կարողանում գտնել ոչ մի գրքում:

պում է ապրել, և այն ունի հետևյալ բովանդակությունը.

-Ինչպե՞ս, թե՞ ինչը,-զարմացավ, որ նա պարզապես պարտավոր էր գուշակել, թե ինչի մասին է խոսում հոգին.

-Դարձյալ նույն բանը: Ձեր ակնարկների վերնագրերը:

Այն մասին, որ պետք է հաղթես ինքդ քեզ և անպայման ոտքի կանգնես մինչև...

Ամենակարևորը այն է, որ քո հաղթանակը հենց քո պարզության և բարության մեջ է: Կտնես, մի՛ հուսահատվիր:

Շաբաթներ անց այս երկխոսությունից հետո համարյա փոխվեց ամեն ինչ... Սակայն դեռևս ամեն ինչ առաջվանը չէր: Երբեմն քրքրում էր իր ընթերցած գրքերը, նայում էջերին, որոնք կարծես անեացել էին աշխարհից: Երևում էին դատարկ էջերը, որոնց ընթերցելու արվեստին նա վաղուց տեղյակ էր: Ապրում էր ապրելու մեծ հույսով, վստահ, որ մի օր անպայման կգտնի կորցրածը, այն հոգեկան դատակությունը, որ պատճեղ էր դրել երկու եսերի միջև...

Սոնա ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ,

Չայ գրակ. պատմ., մագիստր., 1-ին կուրս



Յ Ե Ռ Ա Ց Ո Ւ Մ

Անցյալի գնացքը շատերը կնստեն ու կհեռանան, կգնան քամու ճանապարհով, որ էլ երբեք չգզան նրանց հեռանալը, քամու պես կգնան, որ միայն նրանց գալը նշմարեն:



Նրանք անփութորեն կնստեն, անզգայացած ու բոլոր աղմուկներից հոգնած և չեն էլ նայի, թե որ համարի գնացքն է իրենցը, կնստեն պատահական մեկը և կգնան, որովհետև հոգնել են սպասելուց: Լուռ թախիծով նրանց հոգիները պատեպատ կլինեն, բայց համբերելու ուժ չի մնա՝ մշտապես չզնա-

հատված լինելուց հետո, անսպասելի կզնան ու առանց հեռագիր թողնելու, որովհետև հոգնել են ուղարկված բոլոր հեռագրերի պատասխանը չստանալուց:

Սառույցի վրա բոքիկ ոտքերով կանգնելու պես սոսկալի կլինի նրանց հեռանալը, դեգերումների ճանապարհին հոգի կմաշեն, կարտասվեն առանց հոգի, բայց կգնան՝ իրենք իրենց գնահատելու համար: Վերջին անգամ կժպտան այն կյանքին, որ թողնում են խաբուսիկ ու կեղծ մարդկանց, անմրմունջ կժպտան՝ իմանալով, որ կյանքն այդտեղ իրենց չի սպասելու իր հունց առաջ տանելու համար, կյանքը անողոր է, հեշտ կհամակերպվի կամ գուցե չի էլ զգա իրենց հեռանալը...

Տաթևիկ ՂԱՅՐԱՍՆՅԱՆ,
հայոց լեզու և գրականություն, 2-րդ կուրս

Հ Ր Ե Շ Տ Ա Կ Ա Պ Ե Տ Ը

Գաբրիել Կարենի Ավետիսյանը ծնվել է 2000թ.-ի դեկտեմբերի 20-ին Լոռու մարզի Սպիտակ քաղաքում: Համեստ, խելացի ու ժրաջան այս երիտասարդն իր կյանքի 20 զարուններում հասցրել է վաստակել անուն և պատիվ: Դպրոցական իր 12 տարիներն ավարտել է գերազանց, հաղթող է ճանաչվել տարբեր ինտելեկտուալ խաղերում և ձեռք է բերել մրցանակներ, պատվոգրեր և շնորհակալագրեր: 2019 թ.-ին անցել է ծառայության ԳՀ զինված ուժերում, այնուհետև ծառայությունը շարունակել է Արցախում և 2020 թ.-ի սեպտեմբերի 21-ին մասնակցել է Արցախում կազմակերպված հանրապետական մրցույթին և հանրապետության մասշտաբով զբաղեցրել 2-րդ հորիզոնականը՝ զենքին գերազանց տիրապետելու համար:

Պատերազմը սկսվելուց հետո օրեր շարունակ Գաբրիելը չէր կարողանում կապվել հարազատների հետ՝ տանը իրարանցում էր, մինչդեռ հերոսը պատվով հաղթահարում էր յուրաքանչյուր արգելք: Մեկսիդան հիշում է իր և եղբոր վերջին հեռախոսազրույցը՝ Գաբրիելը խոստացել էր, որ պատերազմից գա, էլ երբեք չեն կռվելու: Քույրը սպասում է...



Գաբրիելը պատերազմի ընթացքում եղել է տարբեր դիրքերում, հասցրել է շահել բոլորի սրտերը: Մարտական ընկերները նրան անվանում էին «Հրեշտակապետ», դիրքերում հրեշտակի նման հսկում էր բոլորին: Նրանց խոսքով տանկը Գաբրիելի ձեռքից պրծում չուներ, խոցել է մեծ թվով թշնամու տանկեր և զրահատեխնիկա: Ասում են՝ Գաբրիելը հզոր հավատով է լցված առ Աստված և միշտ խաչը հանում համբուրում էր ու վստահեցնում բոլորին, որ Աստծո շնորհիվ հաղթելու են, ու բոլորը վերադառնալու են տուն:

Մեկսիդան պատմում է, որ եղ-

բայրը տուն գանգելիս քաջալեբուրում էր բոլորին, պատմում էր օրվա հերոսություններն ու վերջում վստահ ասում՝ հաղթելու ենք:

Հոկտեմբերի 26-ին հակառակորդի դիվերսիոն հարձակման ժամանակ Գաբրիելը հաղթանակի բաղձանքը սրտում քաջի մահով ընկել է Ջրականում (ֆիզուլիում) չտեսնելով ոչ հաղթանակ և ոչ էլ պարտություն :

Հրեշտակապետի արժիվ հոգին սավառնում է Ջրականում:

Լանա Համբարձումյան,
լրագրություն, 2-րդ կուրս